ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2250-Ա « 05 » մայիսի 2026թ.

ԼԻԱՆԱ ԱՐՄԵՆԻ ԱՇՐԱՖՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.19 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 130-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2026 թվականի ապրիլի 14-ի հ. Ն/23376-26 ծանուցումը, ինչպես նաև Լիանա Աշրաֆյանի հետ 2021 թվականի ապրիլի 30-ին կնքված աշխատանքային պայմանագրի 4-րդ գլխի 4.1-ին կետի «ա» ենթակետը և 5-րդ գլխի 5.1-ին կետը՝

1. Լիանա Արմենի Աշրաֆյանին՝ 2026 թվականի մայիսի 5-ից ազատել «Երևանի Նիկոլ Աղբալյանի անվան հ.19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2021 թվականի ապրիլի 30-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «Երևանի Նիկոլ Աղբալյանի անվան հ.19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել նույն կազմակերպության տնօրենի տեղակալ Ռուզաննա Սեդրակյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ